



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

**WESTERN PRELACY**

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## Խաչվերացի Տոնին Առիթով

### **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԱՏԱՐԱԳԵՑ ԵՒ ՄԱՏԱՂՕՐՀՆԷՔ ՎԱՏԱՐԵՑ ՄՈՆԹԵՊԵԼԼՈՅԻ Ս. ԽԱՉ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ**

Գեղեցիկ աւանդութիւն է որ Խաչվերացի տօնին առիթով, որ է նաեւ Ս. Խաչ Մայր Տաճարի անուանակոչութեան տօնը, ամէն տարի եպիսկոպոսական Ս. Պատարագ մատուցուի Տաճարիս մէջ, ապա տեղի ունենայ մատաղի եւ ռեհանի օրհնութիւն:

Այս տարի եւս, Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի անուանակոչութեան տօնը փառաշուք կերպով տօնախմբուեցաւ Կիրակի, 13 Սեպտեմբեր 2009-ին: Տեղի ունեցաւ եպիսկոպոսական Ս. Պատարագ, մատոյց եւ իր հոգեւոր պատգամը փոխանցեց թեմիս բարեջան Առաջնորդ Բարձ. Տէր Մուշեղ Արք. Մարտիրոսեան:

Խաչվերացի տօնը Հայց. Առաքելական Եկեղեցւոյ հինգ տաղաւարներէն վերջինն է:

Կիրակի առաւօտուն, ուխտաւոր հաւատացեալներ եկած էին աղօթելու եւ Ս. Խաչի զօրութեամբ նորոգելու իրենց ուխտը:

Ժամը 11-ին Պատարագիչ Առաջնորդ Սրբազան Հայրը «Հրաշափառ» շարականի երգեցողութեամբ Ս. Խորան բարձրացաւ: Օրուան խորհուրդին եւ անցեալի աւանդութեանց համապատասխան, Ս. Խորանը զարդարուած էր բուրումնաւետ վարդերով եւ ռեհաններով:

Պատարագիչ Սրբազան Հօր կը սպասարկէին եկեղեցւոյ զոյգ հովիւները՝ Արժ. Տ. Նարեկ Զինյ. Փեղիվանեան եւ Արժ. Տ. Աշոտ Զինյ. Գամպուրեան: Հիւրաբար ներկայ էին Ս. Խաչ Մայր Տաճարի նախկին հովիւներէն Տ. Նարեկ Ա. Զին. Շրիգեան եւ Տ. Բարգէն Զինյ. Մանուէլեան: Պատարագի երգեցողութիւնը կատարեց եկեղեցւոյ դպրաց դասը, ղեկավարութեամբ Պրն. Սարգիս Պոյաճեանի:

Եկեղեցին խուռներամ բազմութիւն մը լեցուցած էր: Հաւատացեալներու շարքին, ներկայ էին Ազգ. Վարչութեան անդամներ, ծխական շրջանի երեսփոխաններ, բարերարներ եւ գաղութիս մէջ գործող միութեանց ներկայացուցիչներ:

Իր պատգամին մէջ, պատարագիչ Առաջնորդ Սրբազան Հայրը փառք տուաւ Աստուծոյ եւ օրուան տօնին յատուկ իր պատգամը սկսաւ

շարականագրին հետեւեալ բառերով. «Ով Տէր, Քու կենարար խաչդ մեզի համար փրկութիւն եղաւ. անով բոլորս քեզ կը բարեբանենք»:

Սրբազան Յայրը անդրադարձաւ հաչվերացի տօնին ու Ս. Խաչի խոր իմաստին՝ ըսելով. «Խաչը պարծանքի նշան է, փրկութեան խորհուրդ է, սրբութեան ճանապարհ է, լոյսի շաւիղ է, հաւատացեալին փրկութեան բանալին է: Ան որ խաչին կը նայի, կը թափանցէ անոր խորհուրդին, կը մաքրուի, կը բժշկուի կը լուսաւորուի հոգեպէս եւ ֆիզիքապէս: Խաչը մեր ժողովուրդի կեանքին վրայ իր յաւիտենական դրոշմը դրաւ: Յայ ժողովուրդը լաւ հասկցած է Քրիստոսի Խաչին իմաստը եւ անոր վրայ մեր Տիրոջ թափած անմեղ արեան արժէքը: Խաչը խաղաղութիւն կը շնորհէ մեր կեանքին: Խաչին զօրութիւնը կոչ կ'ուղղէ իւրաքանչիւրիս, մեր ներաշխարհը քննելու, զօրացնելու: Մենք այսօր խաչին նայելով մեր խաղաղութիւնը եւ փրկութեան յաղթանակը կը գտնենք»:

Պատարագի աւարտին, առընթերակայութեամբ հոգեւոր հայրերուն եւ սարկաւագներուն, Առաջնորդ Սրբազան Յայրը կատարեց Խաչի տօնին Անդաստանի արարողութիւնը եւ օրհնեց աշխարհի չորս կողմերը, ապա կատարեց ռեհանի օրհնութիւնը: Արարողութեան աւարտին, Սրբազան Յայրը թափօրով ուղղուեցաւ «Բաղրամեան» սրահ, ուր հաւատացեալներու խումներամ ներկայութեամբ կատարուեցաւ մատաղի օրհնութիւնը: Յանդիսաւոր արարողութիւնները վերջ գտան «Կիլիկիա» մաղթերգով եւ «Մեր Յայրենիք» քայլերգով:

Մատաղը բաշխուեցաւ ներկայ հաւատացեալներուն: Մատաղի սեղանին շուրջ խօսք առին հոգաբարձութեան ատենապետ Տոքթ. Յակոբ Տիգրանեան, Ազգ. Վարչութեան ատենապետ Տոքթ. Կարօ Յակոբեան, Ազգ. Վարչութեան անդամ իրաւաբան Տիար Լեւոն Կիրակոսեան եւ Տիկնանց միութեան ատենապետուհի Տիկ. Քնար Պաղտասարեան: Ապա, Առաջնորդ Սրբազան Յայրը իր օրհնութեան, շնորհաւորական, քաջալերանքի եւ գնահատանքի խօսքը ուղղեց Ս. Խաչ Մայր Տաճարի հովիւներուն, հոգաբարձութեան, Տիկնանց Միութեան, եւ ներկայ հաւատացեալներուն, մաղթելով Մոնթեպելլոյի գաղութիւն բարգաւաճ եւ բեղուն կեանք: Ներկաները, հաչվերացի այս Տօնին, զօրացած եւ վերանորոգուած օրուան խորհուրդով, իրենց տուները մեկնեցան:

### **CELEBRATING THE NAME DAY OF HOLY CROSS CATHEDRAL**

## **EPISCOPAL DIVINE LITURGY AND BLESSING OF MADAGH ON THE FEAST OF THE EXALTATION OF THE HOLY CROSS**

On Sunday, September 13<sup>th</sup>, 2009, the Feast of the Exaltation of the Holy Cross and the name-day of Holy Cross Cathedral was celebrated with Episcopal Divine Liturgy and the blessing of madagh and basil.

Accompanied by the singing of “Hrashapar”, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, proceeded to the altar, which was adorned with roses and basil, to begin the service.

Parish pastors Rev. Fr. Nareg Pehlivanian and Rev. Fr. Ashod Kambourian assisted at the altar, while former pastors Archpriest Fr. Nareg Shrikian and Rev. Fr. Papken Manuelian participated in the service. Hundreds of faithful were in attendance, among them Executive Council members, delegates, sponsors, and friends.

In his sermon the Prelate reflected on the meaning behind the Holy Cross saying, “The Cross is a symbol of glory and redemption, the path to light and righteousness, and the key to salvation. Those who look to the Cross and fully comprehend its deeper meaning are cleansed and enlightened spiritually and physically. The Armenian people have recognized the significance of the Cross on which our Lord Savior shed His blood and which brings peace to our lives. Thus, we are all called upon to reflect on our lives and strengthen our faith and spirit by the power of the Holy Cross to find peace and salvation.”

Following Divine Liturgy the Prelate conducted the “Antasdan” ceremony, blessing the four sides of the church, then the blessing of basil.

The Prelate, clergy, and faithful then headed to “Bagramian” Hall for the blessing of “madagh”. The ceremony concluded with the singing of the Cilician and Armenian national anthems.

During the ensuing reception remarks were delivered by Board of Trustees Chair Dr. Hagop Dikranian, Executive Council Chair Dr. Garo Agopian, Executive Council member Mr. Levon Kirakosian, and Ladies Auxiliary Chair Mrs. Knar Baghdassarian. The Prelate then addressed the faithful, conveying his blessings, commendation, and encouragement to all the servants of the church, and wished success and prosperity to the parish.